Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Սիսիանի հ.4 հիմն.

Թեմա՝ Մոտիվացիան՝ որպես ուսուցման կարևորագույն մաս

Վերապատրաստող- մենթոր՝ Արմինե Մեծրիցյան

Ուսուցիչ՝ Գեղեցիկ Եփրեմյան

Սիսիան 2023

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

Գլուխ 1 Մոտիվացիա, տեսակներ, խրախուսման ձևեր 5

Գլուխ 2 Ուսումնառության ընթացքում մոտիվացիայի ձևավորում 9

Գլուխ 3 Ինչու՞ է կարևոր աշակերտների մոտիվացիան դասի տարբեր փուլերում 12

Գլուխ 4 Միջին դպրոցում աշակերտների սովորելու մոտիվները <<Պատմություն>> առարկայի շրջանակներում: 16

Եզրակացություն 18

Օգտագործված գրականության ցանկ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից դպրոցը ներկայումս ուղղված է յուրաքանչյուր աշակերտի կարողությունների բացահայտմանը, բարձր տեխնոլոգիաների, մրցունակ աշխարհում կյանքին պատրաստ անհատի դաստիարակմանը: Կրթության թարմացված բովանդակությունը պետք է համապատասխանի այս առաջադրանքին: Հարց է առաջանում՝ ինչպե՞ս ավելի արդյունավետ դարձնել ուսուցման գործընթացը: Ի վերջո, յուրաքանչյուր ուսուցիչ ցանկանում է, որ իր աշակերտները լավ սովորեն՝ մեծ հետաքրքրությամբ ու ցանկությամբ: Կրթության և դաստիարակության ոլորտում ամենասուր խնդիրները կապված են աշակերտների մեծ մասի մոտ կրթություն ստանալու մոտիվացիայի բացակայության հետ, ինչը հանգեցնում է բոլոր ուսումնական հաստատությունների շրջանավարտների կրթության և դաստիարակության հիմնական ցուցանիշների նվազմանը: Ուսումնական գործունեությունը տարբեր աշակերտների համար տարբեր նշանակություն ունի: Ուսուցման մոտիվացիայի բնույթը և աշակերտի համար ուսուցման իմաստը որոշելը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որոշիչ դեր է խաղում ուսուցչի կողմից մանկավարժական ազդեցության չափի հարցում: Ժամանակակից դպրոցում սովորելու մոտիվացիայի հարցը, առանց չափազանցության, կարելի է անվանել կենտրոնական, քանի որ շարժառիթը գործունեության աղբյուրն է և կատարում է մոտիվացիայի և իմաստի ձևավորման գործառույթ: Նախակրթական տարիքը նպաստավոր է սովորելու կարողության և ցանկության հիմքը դնելու համար, քանի որ գիտնականները կարծում են, որ մարդու գործունեության արդյունքները 20-30%-ով կախված են ինտելեկտից, իսկ 70- 80%-ը՝ դրդապատճառներից1 : Աշխատանքի **նպատակն** է՝ ուսումնասիրել մոտիվացիան և վերջինիս ազդեցությունը՝ որպես կարևորագույն կրթական գործառույթ:

Աշխատանքի **խնդիրներն** են.

- Ներկայացնել մոտիվացիայի էությունը, կարևորությունը,
- Քննել դրա տեսակները, դրսևորման ձևերը տարրական դասարաններում,
- Ներկայացնել մոտիվացիայի բարձրացմանն ուղղված դասապրոցեսի

կազմակերպման հնարավոր տարբերակները:

Գլուխ 1. Մոտիվացիա, տեսակներ, խրախուսման ձևեր

Մարդկային վարքագծի գրեթե բոլոր ասպեկտներում մոտիվացիան շատ մեծ դերակատրություն ունի: Ցանկացած որոշում կայացնելիս մենք առաջնորդվում ենք մոտիվացիոն ներքին մղումներով:
Հոգեբանները, խոսելով մոտիվացայի մասին, նշում են, որ դա ներքին վիճակ է, ցանկություն, որն ակտիվացնում է վարքագիծը և ուղղորդում դեպի նպատակը: Այլ կերպ ասած՝ մոտիվացիան կարիքների և ցանկությունների ազդեցությամբ թելադրվող վարքագիծն է:
Մեկ այլ սահմանման համաձայն՝ մոտիվացիան գործընթաց է, որը սկիզբ է դնում, ուղղորդում և պահպանում դեպի նպատակը տանող վարքագիծը: Մոտիվացիան խթան է, որը ստիպում է մեզ գործել: Ընդ որում՝ տարբեր են և՛ նպատակները, և՛ մեխանիզմները: Մեխանիզմ կարող է լինի թե՛ **ծարավը հագեցնելու համար** (նպատակ) **մեկ բաժակ ջուր խմելը** (մեխանիզմ), թե՛ **գիտելիք ստանալու համար** (նպատակ) **գիրք կարդալը** (մեխանիզմ):
Պատմության ընթացքում հոգեբաններն առաջարկել են տարբեր տեսություններ՝ բացատրելու, թե ինչն է դրդում և ձևավորում մարդու վարքագծը: Մոտիվացիայի բնազդային տեսությունը ենթադրում է, որ վարքագիծը ձևավորվում է բնազդներով (Ուիլյամ Ջեյմս, Զիգմունդ Ֆրեյդ և Ուիլյամ Մաքդուգալ): Դրանք ներառում են կենսաբանական բնազդներ, որոնք կարևոր են օրգանիզմի գոյատևման համար, ինչպիսիք են վախն ու սերը: Կարիքների հիերարխիան մեկ այլ մոտիվացիայի տեսություն է (Աբրահամ Մասլոուի պահանջմունքների բուրգ), որը հիմնված է հիմնական ֆիզիոլոգիական պահանջմունքները բավարարելու ցանկության վրա: Որպես հումանիստ՝ Մասլոուն հավատում էր, որ մարդիկ ինքնաիրականացման բնածին ցանկություն ունեն, այսինքն՝ լինել այն ամենը, ինչ կարող են լինել: Այս վերջնական նպատակին հասնելու համար, սակայն, պետք է բավարարվեն մի շարք ավելի հիմնարար կարիքներ, ինչպիսիք են սննդի, անվտանգության, սիրո և ինքնագնահատականի պահանջմունքները: Ճանաչողական մոտիվացիան ներքին գործողության ազդակ է, որն օգնում է մեզ ավարտին հասցնել այն, ինչ սկսել ենք: Այն գտնվում է գրեթե ցանկացած գործողության հիմքում, խթանում և ուղղորդում է այդ գործողությունը[1]:

Այժմ խոսենք մոտիվացման (խրախուսման) տեսակների մասին: Հոգեբաններն առանձնացնում են խրախուսման երկու հիմնական տեսակ՝ **ներքին** և **արտաքին**:
Ներքին մոտիվացիա

[1] (Зайцева М.В.Мотивация и некоторые пути её повышения. М., ИД «Первое сентября», 2003, էջ23):

Ներքին մոտիվացիայի դեպքում անհատի խրախուսման ազդակները/շարժառիթները բխում են ներսից, կապված են իր սեփական հետաքրքրությունների և ցանկությունների հետ:

Առանձնացվել են ներքին մոտիվացիան բարձրացնող/խթանող մի քանի գործոն՝

Մարտահրավեր

Մարդիկ մոտիվացվում են, երբ փորձում են հասնել մի նպատակի, որը բխում է իրենց անձնական հետաքրքրություններից, կապված է ինքնազնահատականի բարձրացման հետ, որտեղ գործողության արդյունքը հասանելի է, և նպատակին հասնելը հնարավոր է, բայց ոչ շատ հեշտ:

Հետաքրքրություն

Մարդու ներքին մոտիվացիան բարձրանում է, երբ ֆիզիկական միջավայրում ինչ-որ բան գրավում է անհատի ուշադրությունը, այն է՝ զգայական հետաքրքրությունը, և երբ գործողությունը կամ աշխատանքը կատարելիս անհատի մոտ ցանկություն է առաջանում սովորել ավելին, այն է՝ ճանաչողական/իմացական հետաքրքրություն:

Հսկողություն

Մարդիկ սիրում են, երբ իրենց և իրենց միջավայրը վերահսկվում է և հստակ սահմանված են նպատակները. ուր են գնում և ինչու:

Համագործակցություն և մրցակցություն

Ներքին մոտիվացիան կարող է բարձրանալ այնպիսի իրավիճակներում, երբ անհատը բավականություն է ստանում մեկ ուրիշին օգնելուց, ինչպես նաև այն դեպքերում, երբ կարողանում է համեմատել իր և մյուսների կատարած աշխատանքը, որտեղ ինքն ավելի շահեկան դիրքերում է:

Ճանաչում/Ընդունում

Մարդիկ սիրում են, երբ իրենց կատարած աշխատանքը և գրանցած հաջողությունները ճանաչվում և ընդունվում են մյուսների կողմից[2]:

Արտաքին մոտիվացիա

Արտաքին մոտիվացիայի դեպքում անհատի խրախուսման ազդակները (շարժառիթները) գալիս են արտաքին աշխարհից, աշխատանքը կատարվում է ակնկալիքով, որ լինելու է սպասված պարգևատրումը՝ նյութական կամ ոչ նյութական (գումար, պատվոգիր, մրցանակ, գովաբանում, լավագույն աշակերտի ճանաչում և այլն):



Առանձնակի ուշադրության է արժանի SCARF [3] (կարգավիճակ, հստակություն, անկախություն,կապվածություն, ազնվություն) անունը ստացած մոդելը, որը մարդկանց մոտիվացիան բարձրացնելու կիրառելի ու արդյունավետ գործիք է: Այս մոդելի հիմքում նյարդաբանական

[2] Malone, T. & Lepper (1987). Making Learning Fun: A Taxonomy of Intrinsic Motivations for Learning. In Snow, R. & Farr, M. J. (Ed), Aptitude, Learning, and Instruction Volume 3: Conative and Affective Process Analyses. Hillsdale, NJ

[3] David Rock, SCARF: a brain-based model for collaborating with and influencing others, CEO, Results Coaching Systems International, GPO Box 395, Sydney, NSW Australia 2001 Faculty, CIMBA, http://www.davidrock.net/files/NLJ_SCARFUS.pdf

հետազոտությունն է, համաձայն որի՝ սոցիալական վարքագիծը կառավարվում է վախերը (սպառնալիքները) նվազեցնելով և խրախուսումը բարձրացնելով: Այլ կերպ ասած՝ ինչպես նշում է մոդելի հեղինակը՝ Դևիդ Ռոքը, սոցիալական կարիքների վախերի դրսևորումները ուղեղում արտահայտվում են նույն կերպ, ինչպես սննդի կամ ջրի կարիքը:

Իրական առաջնորդը պետք է զարգացնի այլոց վրա ազդելու կարողությունը՝ նվազեցնելով վտանգը, բարձրացնելով խրախուսումը (պարգևը): Այս մեխանիզմի կիրառումը նպաստում է աշխատողի ներգրավվածության մեծացմանը, իսկ ներգրավվելու դեպքում ստանում ենք ավելի բարձր արդյունքներ, քանի որ նա աշխատանքի արդյունքը կապում է իր կատարած գործի հետ:

Այս մոդելը ներառում է մարդու սոցիալական փորձառության հինգ ոլորտ՝

1. **կարգավիճակ,**
2. **հստակություն,**
3. **անկախություն,**
4. **կապվածություն,**
5. **ազնվություն:**

Անդրադառնանք յուրաքանչյուրին առանձին-առանձին:

Կարգավիճակը/Status կապված է հարաբերական կարևորության հետ. դա անձի ընկալումն է, թե ինչպիսին է նա շրջապատի աչքերում: Կարգավիճակը վարքագծի վրա ազդող կարևոր խթաններից է: Շատ հեշտությամբ, երբեմն ոչ դիտավորյալ, կարելի է խոսքով, դիտարկմամբ, խորհրդով դիմացինի մոտ առաջացնել կարգավիճակը նվազեցնող վախ: Իրական առաջնորդն ամեն վայրկյան փորձում է նվազեցնել այս վախերը: Օրինակ՝ խնդրում է աշխատողին իր գնահատականը կամ կարծիքը արտահայտել կատարված աշխատանքի վերաբերյալ, կամ սովորելու, զարգանալու և կատարված աշխատանքն ու գրանցված հաջողությունները հանրայնացնելու հնարավորություն է ստեղծում:

Հստակություն/Certainty կապված է ապագան կանխորոշելու կարողության հետ: Որոշակիության բացակայությունը, կատարվող աշխատանքի նպատակների, ժամկետների ու սպասվող արդյունքների անորոշությունը կարող է ազդել աշխատանքի արդյունավետության վրա: Որպեսզի խուսափենք այս ամենից, անհրաժեշտ է հստակ լինել ցանկացած հարցում: Օրինակ՝ հերթական հրավիրված ժողովի հենց սկզբում նշել, թե որքան կտևի հանդիպումը, ինչ և ինչու է քննարկվելու: Ավելի երկարաժամկետ աշխատանքի դեպքում, եթե չկա հստակ տեղեկություն, անհրաժեշտ է նշել՝ երբ կարող են ստանալ այն:

Անկախությունը/Autonomy սեփական միջավայրը վերահսկելու ընկալումն է, զգացողությունը, որ ունես ընտության հնարավորություն: Աշխատողին լիարժեք (էական) անկախություն տալը կարող է լինել բարդ: Սակայն կարելի է ուրվագծել անտեսանելի սահմաներ, որտեղ նա կարող է գործել անկախ, կայացնել որոշումներ՝ առանց ղեկավարի կամ առաջնորդի միջամտության:

Կապվածությունը/ Relatedness վերաբերում է այլոց (մյուսների) շրջապատում ապահովության զգացողությանը: Բազմաթիվ աշխատանքային թիմերում կապվածությունը վարքագծի շարժիչն է, քանի որ մարդիկ սիրում են կազմել խմբեր, թիմեր, որտեղ անդամները կապված են միմյանց: Փոքր խմբերում մարդիկ իրենց ավելի ապահով են զգում, քան մեծերում: Կապվածության հասկացությունը սերտորեն կապված է վստահության հետ: Անծանոթ միջավայրում ապահովության

զգացողություն ստեղծելուն կարող է նպաստել ձեռքսեղմումը, անունների փոխանկումը, որևէ ընդհանուր թեմայի քննարկումը, թիմի ներսում՝ անձնական բնույթի տեղեկությունով կիսվելը, սովորեցնելը, ուղղորդելը և այլն:
Ազնվության/ Fairness դեպքում խոսքը մարդկանց միջև ազնիվ փոխահարբերությունների մասին է: Սա կարող է մասամբ բացատրել՝ ինչու են մարդիկ ի շահ իրենց համայնքի կամավորական աշխատանք կատարելիս ներքին բավարարվածություն զգում, բարձրանում է ներքին մոտիվացիան: Անհրաժեշտ է բարձրացնել թափանցիկությունն աշխատանքներում, ինչպես նաև հեշտացնել թիմի անդամների միջև հաղորդակցությունը: Անհրաժեշտ է հստակ ներկայացնել սպասելիքները թիմից և ներքին կանոնակարգը: Ավելի արդյունավետ է, երբ այս կանոնները մշակվում են թիմի հետ միասին: Անհրաժեշտ է թիմի բոլոր անդամներին վերաբերվել նույն կերպ՝ չառանձնացնելով որևէ մեկին թե՛ դրական, թե՛ բացասական առումով:

Այսպիսով՝ մոտիվացիան այն գործիքն է, որն օգնում է կյանքի զանազան ասպեկտներում: Մոտիվացված աշակերտը առավել պատրաստակամ ու պատասխանատու է լինում: Որպես ուսուցիչներ՝ մենք հանդիսանում ենք «զբոսավար», մենթոր և ոգեշնչման աղբյուր մեր աշակերտների համար. ուստի կարևոր է առաջնային համարել աշակերտներին ճանաչելը. կիսել նրանց հետաքրքրությունները, ծանոթանալ նրանց նախասիրություններին, կարիքներին թե՛ դասապրոցեսում, թե՛ դպրոցից դուրս: Ուսուցիչ-աշակերտ հարաբերություններում կարևոր է աշակերտակենտրոնությունը, քանի որ, երբ աշակերտը հասկացված է զգում իրեն, դասապրոցեսը նրա համար դառնում է ապահով, և վերջինս սկսում է առավել շատ աշխատել:

Գլուխ 2 Ուսումնառության ընթացքում մոտիվացիայի ձևավորում

Կրթական գործընթացը դյուրին բան չէ, երեխայի մեջ սովորելու ցանկություն արթնացնելն ու այն պահպանելը՝ է՛լ ավելի: Բոլորս ենք ցանկանում պրպտող, հետաքրքրասեր, դպրոցում «լավ սովորող» երեխա դաստիարակել, բայց միշտ չէ, որ հաջողում ենք: Կրթական գործընթաց կոչվող երկար ու ձիգ ճանապարհին ծնողի մոտ առաջացող հարցերը շատ են, պատասխաններն ու տարատեսակ խնդիրների լուծումները՝ ոչ միշտ հասանելի: Հետևանքը՝ կրթության հանդեպ սերը կորցրած երեխա: Ի՞նչն այնպես չի ստացվում, որտե՞ղ է սխալվում ծնողն, ու ի՞նչ պիտի անի դպրոցը, որպեսզի երեխան չկորցնի կրթական մոտիվացիան:

Մենք չպետք է մոռանանք՝ երեխան սովորում է այն և զբաղվում է այն ամենով, ինչն իրեն հետաքրքրում է:

Իսկ կրթական պահանջներն ու մեթոդները, որոնք ձևավորվել են 20-րդ դարում, 21-րդ դարի միջավայրում այլևս ի վիճակի չեն երեխայի մոտ վառ պահելու հետաքրքրության կայծը: Ավելին, ոչ բոլորն են այսօր համաձայն ուսուցման երեխայակենտրոն մոդելի հետ, երբ կրթական մեթոդաբանությունը հիմնվում է երեխայի՝ մինչ այս ունեցած գիտելիքի, փորձի, հմտությունների ու կարողությունների վրա, և երբ դպրոցում երեխայի համար հարմարավետ միջավայր է ստեղծվում, նա դառնում առավել մոտիվացված:

Կարևոր ենք համարում նաև անդրադառնալ մի կարևոր հանգամանքի, որպեսզի ունենանք մոտիվացված աշակերտներ, պետք է ունենանք մոտիվացված ուսուցիչներ: Ուսուցիչը պետք է իր աշխատանքում լինի ազատ և նյութապես ապահով, որ ձգտի դասապրոցեսը դարձնել առավել հետաքրքիր ու ինտերակտիվ, որն էլ կդառնա մեկ քայլ աշակերտին մոտիվացնելու:

Յուրաքանչյուր ուսուցիչ, մանկավարժ իր գործունեության ընթացքում հանդիպում է աշակերտների տարիքային զարգացման օրինաչափությունների ճանաչման և դրանցով առաջնորդման խնդրին, ինչը կարող է նպաստել ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: Կարևոր է տիրապետել աշակերտների տարիքային առանձնահատկություններին, երբեմն տուրք տալ նրանց ցանկություններին, շահել աշակերտների վստահությունը, որը մեծ խթան կդառնա

ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների մեջ և կնպաստի ուսումնառության որակի բարձրացմանը:

Ուսուցիչը և աշակերտը մոտիվացիա պետք է ունենան, երբ մտնում են դասարան: Եթե ուսուցիչը չունի մոտիվացիա, երբ մտել է դասարան եւ, եթե աշակերտը չունի մոտիվացիա, որ եկել է քո դասին, կամ, եթե դու չես կարողացել առաջին հինգ րոպեի ընթացքում մոտիվացնել նրան, դասը կձախողվի: Ուսուցիչների հետ աշխատանք պետք է տարվի, որ նրանք իմանան, թե ինչպե՞ս պետք է մոտիվացնել այսօրվա երեխային: Կարևոր է ուսուցիչներին ուղղորդել ընկերային հարաբերությունների. այս դեպքում ամեն տեսակի հարց, անհավասարություն կլուծվի, երբ երեխան կհասկանա, որ ուսուցչին երբ դիմում է «ընկեր» բառով, նա իրոք ընկեր է:

Ուսումնական գործընթացում մոտիվացիաների ձևավորումը: Ինչպես ցանկացած այլ մոտիվացիա, ուսումնական մոտիվացիան սահմանվում է ուսման համար կարևոր համարվող մի շարք փաստերով.

● կրթական համակարգով, կրթական հաստատությունով, որտեղ իրականացվում է ուսումնական պրոցեսը,

● ուսումնական պրոցեսի կազմակերպմամբ,

● աշակերտի սուբյեկտային առանձնահատկություններով (տարիք, սեռ, ինտելեկտուալ զարգացվածություն, գրավչության մակարդակ, ինքնագնահատական, այլ աշակերտների հետ փոխազդեցություններ և այլն),

● ուսուցչի սուբյեկտիվ առանձնահատկություններով, և, առաջին հերթին, համակարգային վերաբերմունքով իր գործի և աշակերտների հանդեպ,

● ուսուցանվող առարկայի յուրահատկություններով: Հաճախ ուսուցիչները ոչ միշտ են անհրաժեշտ ուշադրություն դարձնում սովորողի մոտիվացիայի վրա: Շատ ուսուցիչներ հաճախ չհասկանալով մտածում են, որ եթե երեխան եկել է դպրոց, ապա նա պետք է անի այն ամենն, ինչ խորհուրդ է տալիս, հանձնարարում է ուսուցիչը: Պրակտիկայում հանդիպում են նաև այնպիսի ուսուցիչներ, որոնք նախ և առաջ առաջնորդվում են բացասական մոտիվացիաներով: Նման դեպքերում աշակերտներն առաջնորդվում են մի ցանկությամբ՝ խուսափել այնպիսի տհաճություններից, ինչպիսիք ուսուցչի կամ ծնողների կողմից պատիժն է, վատ գնահատականը և այլն: Ուսուցիչը պետք է միշտ հիշի, որ երեխան չի կարող երկար ժամանակ առաջնորդվել բացասական մոտիվացիաներով, որոնք ծնում են բացասական 11 էմոցիաներ: Եթե սրանով է առաջնորդվում ուսուցիչը, արդյոք պե՞տք է զարմանալ, որ աշակերտներից շատերի մոտ սկսվում է նկատվել նեվրոզի նշաններ: Ուսումնական մոտիվացիաների ձևավորման ընդհանուր իմաստն այն է, որ ուսման հանդեպ աշակերտների վերաբերմունքը մերժողական կամ անտարբեր վիճակից բերի դրական վերաբերմունքի՝ գիտակցված և պատասխանատու: Ուսուցչի աշխատանքը

մոտիվացիոն միջավայրի զարգացումն ու պարզեցումն է և ներառում է ազդեցության հետևյալ ձևերը.

● Նախկինում արդեն աշակերտի մոտ ձևավորված մոտիվացիոն կառուցվածքի արդիականացում, որն անհրաժեշտ է ոչ թե փլուզել, այլ ամրացնել ու քաջալերել:

● Նոր մոտիվացիոն սխեմաների ի հայտ գալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծում և նրանց մոտ նոր որակների ձևավորում (համառություն, գիտակցվածություն, նախաձեռնողականություն և այլն):

● Թերությունների մոտիվացիոն կառուցվածքների շտկում:

● Երեխայի մոտ ոչ միայն այդ պահին առկա սեփական հնարավորությունների, այլև դրանց զարգացման հնարավորությունների հանդեպ ներքին վերաբերմունքի փոփոխություն: Ձևավորումը ներառում է մի քանի բաժիններ՝ աշակերտների մոտիվների, նպատակների, էմոցիաների, ուսումնաճանաչողական գործունեությունների հետ աշխատանք: Յուրաքանչյուր բաժնում աշխատանք է տարվում նախորդ մոտիվների արդիականացման և շտկման վրա, ինչպես նաև նոր մոտիվների և որակների ստիմուլացիայի ուղղությամբ:

Մենք չպետք է մոռանանք, որ սոցիալ-տնտեսական պայմանները ևս մեծ ազդեցություն ունեն ուսումնառության վրա: Հաճախ գյուղական համայնքներում աշակերտները դասի չեն հաճախում, քանի որ զբաղվում են գյուղական գործերով, իսկ շատերը լուծում են ապրուստի հարցերը: Այս հարցերը իր վրա պետք է վերցնի պետությունը, որ ապահովվի բոլորի լիարժեք մասակցությունը ուսումնական գործընթացին:

Այսպիսով՝ ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները շատ կարևոր են ուսումնառության ճիշտ կազմակերպման համար: 21-րդ դարի երեխային այլևս չես զարմացնի «դատարկ» գիտելիքներով: Այժմյան կրթական միջավայրը պիտի լինի առավել ազատականացված:

Գլուխ 3 Ինչու՞ է կարևոր աշակերտների մոտիվացիան դասի տարբեր փուլերում

Ուսումնական գործընթացում մոտիվացիայի ձևավորման փուլերը հետևյալն են.

● Սկզբնական մոտիվացիայի ձևավորում։ Դասի սկզբում ուսուցիչը կարող է կիրառել սովորողներին ոգևորելու մի քանի մոտեցումներ։ Կարելի է վերհիշել սովորողների նախորդ նվաճումները (Մենք անցած թեմայի վրա լավ աշխատեցինք), արտահայտել որոշակի անբավարարվածություն (բայց դեռ չենք յուրացրել այս թեման մեկ այլ կողմից), ուժեղացնել հետագայում սպասվելիք աշխատանքների նկատմամբ մոտիվները աշակերտների մոտ (ընդ որում, ձեր հետագա կյանքում սա անհրաժեշտ է լինելու որոշակի իրավիճակներում), ավելի շարժել հետաքրքրասիրությունը։

● Առաջացած մոտիվացիայի ամրապնդում և ուժեղացում։ Այստեղ ուսուցիչը ուշադրությունը կենտրոնացնում է ճանաչողական ու սոցիալական մոտիվների վրա՝ հետաքրքրություն առաջացնելով խնդրի լուծման տարբեր մոտեցումների առանձնացման վրա (ճանաչողական), և մյուսների հետ համագործակցության տարբեր մեթոդների նկատմամբ (սոցիալական)։ Այս փուլը հատկապես կարևոր է, որովհետև ուսուցիչը առաջնային փուլում հետաքրքրություն առաջացնելուց հետո երբեմն դադարում է դրա մասին մտածել և կենտրոնանում է դասի բովանդակության վրա։ Դրա համար կարելի է օգտագործել գործունեության տարբեր մեթոդներ՝ ըստ հերթականության (բանավոր և գրավոր, բարդ և հեշտ, և այլն)։

● Դասի ավարտ։ Այստեղ չափազանց կարևոր է, որ աշակերտը ավարտի աշխատանքը դրական անձնական փորձով, և որ վերջում նրա մոտ առաջանա դրական տրամադրվածություն դեպի սովորելու հետագա գործընթացը։ Այս փուլում հատկապես կարևորագույն դեր է խաղում սովորողի կողմից գնահատողական մոտեցումը, որը համադրվում է ուսուցչի կողմից գնահատման հետ։ Որպեսզի սովորողի մոտ ճիշտ պատկերացում ձևավորվի սեփական հնարավորությունների մասին, այստեղ շեշտը դրվում է իրենց թույլ կողմերի վրա։ Սա նրանց մոտիվացիան ավելի ադեկվատ ու գործող է դարձնում։ Դասաժամի ամեն մի փուլին ուսուցիչը պետք է հոգեբանական բովանդակություն հաղորդի, քանի որ ամեն փուլը մի

հոգեբանական իրավիճակ է։ Որպեսզի հոգեբանորեն ճիշտ կառուցվածք ունենա դասաժամը, ուսուցիչը պետք է կարողանա պլանավորել խնդիրների զարգացնող ու դաստիարակող այն մասերը, որոնք կապված են սովորողի մոտիվացիայի ու սովորելու ունակության հետ։ Սովորաբար ուսուցչի համար ավելի հեշտ է պլանավորել ուսուցողական խնդիրները (սովորեցնել որոշակի տիպի խնդիրներ լուծել), քան զարգացնող։ Զարգացնող հիմնական մանկավարժական խնդիրները, որոնք կարող են օգտագործվել այն ուսուցիչների կողմից, ովքեր նպատակայնորեն աշխատում են սովորողների մոտիվացիայի ու սովորելու ունակության ձևավորման վրա, մի քանիսն են։ Դրանցից է աշակերտի մոտ սովորելու ունակության ձևավորումը։ Սա իրենից ենթադրում է ավելացնել իրական գիտելիքի պաշարը, մշակել գիտելիքի յուրացման տարբեր մեթոդները, մակարդակներն ու փուլերը։ Աշակերտի մոտ պետք է ձևավորվի նաև նպատակներն ու խնդիրները հասկանալու ունակություն։ Այստեղ ներառված է նաև աշակերտի կողմից ինքնուրույն որոշակի խնդիրներ ու նպատակներ սահմանելու ունակությունը և դրանց ձևակերպումը։ Պետք է սովորեցնել աշակերտներին ինքնավերահսկողություն և ադեկվատ ինքնագնահատական տալ սեփական անձին։ Նրանք պետք է կարողանան գիտակցել իրենց մոտիվները ուսումնական գործընթացում։ Որոշակի նպատակներ ձևավորելն ու սահմանելը պետք է սկսել հենց առաջին դասարանից, իսկ դրանց գիտակցումն ու հատկապես մոտիվացիայի ընկալումը՝ արդեն միջին դասարաններում։ Դիտարկելով աշակերտների մոտ ուսուցման նկատմամբ մոտիվների առաջացման ու զարգացման յուրահատկությունները՝ անհրաժեշտ է հաշվի առնել նաև համատեղ ուսումնառության նկատմամբ մոտիվացիայի ձևավորումը։ Եթե աշակերտի մոտ շարժիչ ուժը ցանկությունը, ձգտումն է տիրապետել որևէ ուսումնական նյութին կամ այն գտնելու մեթոդներին, ապա մենք խոսում ենք ճանաչողական և ուսումնա-ճանաչողական մոտիվների մասին։ Իսկ կոլեկտիվ ուսումնառության դեպքում շեշտադրումները փոփոխվում են։ Այստեղ աշակերտին հետաքրքրում է գործընկերոջ հետ այնպիսի փոխհարաբերությունների կառուցումը, որի դեպքում ուսումնառությունը կլինի առավել արդյունավետ։ Համատեղ սովորելու ընթացքում աշակերտը սովորում է համադրել, համեմատել ու դիտարկել այլ տեսակետներ, ապացուցել սեփական ճշմարտացիությունը։ Այսպիսի քննարկումները ուսուցիչների

հետ գրեթե անհնարին են, քանի որ վերջիններս առավել փորձառու են, ինչպես նաև ուսուցիչը միշտ ճիշտ է աշակերտի կարծիքով և աշակերտը, սովորաբար, անգիտակցաբար համաձայնվում է ուսուցչի կարծիքի հետ: Իսկ հասակակիցների դեպքում աշակերտը պատրաստ է բանավիճել, կամ ի սկզբանե իրեն համարում է ճիշտ: Ամեն դեպքում աշակերտը գիտակցում է, որ կան նաև այլ կարծիքներ: Ուսումնառության ընթացքում տարբեր տեսակետները համադրելու ունակությունը բերում է համագործակցության մոտիվի առաջացմանն ու զարգացմանը: Աշակերտի մոտիվացիոն համակարգը կրթական ձեռքբերումների վրա ազդող կենտրոնական գործոններից մեկն է: Այս խնդիրը եղել է բազմաթիվ հետազոտողների ուշադրության կենտրոնում և բազմիցս ապացուցել է իր նշանակալիությունը կրթական ձեռքբերումների հետ կապում: Կարող են լինել մոտիվացիայի երկու խումբ՝ ներքին և արտաքին: Ներքին մոտիվացիա ունեցող աշակերտները կարծում են, որ կրթությունը հետաքրքիր է և հաճույք է իրենց պատճառում: Արտաքին մոտիվացիա ունեցող աշակերտները համարում են, որ կրթությունը կարևոր է աշխատանք գտնելու, գումար վաստակելու և հաջողության հասնելու համար: Հարկ է նշել, որ հետազոտական աշխատանքների մեծամասնությունը վկայում են ներքին մոտիվացիայի ավելի կարևոր դերի մասին: Միաժամանակ նշվում է, որ արտաքին մոտիվացիան երբեմն ուղղորդում է ներքինը: Աշակերտի կողմից սեփական գիտելիքի մակարդակի ընկալումը նշանակալի գործոն է: Աշակերտները, ովքեր չեն կարծում, որ տրված առաջադրանքը իրենց ուժերին համապատասխան է, կարող են ցածր մակարդակի ձեռքբերումներ ունենալ: Եվ հակառակը, ովքեր համարում են, որ առաջադրանքը իրենց ուժերին համապատասխան է, կարող են ավելի բարձր մակարդակի ձեռքբերումներ ունենալ:

Մի քանի ուղի մոտիվացման համար.

- Օգտագործել տարբեր միջոցառումներ աշակերտներին ակտիվացնելու համար:
- Դասապրոցեսում ունենալ դադարներ՝ ֆիզկուլտուրա, երգ, ասմունք, հարցեր, որոնք թույլ կտան աշակերտներին լիցքաթափվել, ապա անցնել դասին:

- Սահմանել հասանելի նպատակներ: Պարզ և հասանելի նպատակներն օգնում են աշակերտներին հետևել սեփական առաջընթացին և գտնել սեփական հաջողությունը և ձգտել ավելիին:
- Թույլ տալ աշակերտներին ինքնարտահայտվել և դրսևորել կառուցողական քննադատություն: Իմ անձնական փորձը ցույց է տվել, որ սա աշակերտի մոտ ձևավորում է ավելին անելու մոտիվ, որ կարողանա երբեմն նույնիսկ հակադարձել ուսուցչին՝ ապացուցելով սեփական ճշմարտացիությունը:
- Ուսումնառությունը կապել աշակերտների հետաքրքրությունների շրջանակին:

  Օգնել աշակերտներին գտնել կապ դասի և սեփական հետաքրքրությունների միջև[4]:

- Առաջարկել պարգևներ.

  Սա հնարավորություն կտա միշտ մոտիվացված պահել աշակերտին, քանզի այժմ գնահատականը սպառել է իրեն:
- Երբեմն հանդես գալ աշակերտի դերում. սա թույլ կտա աշակերտներին լինել առավել անկաշկանդ և համարձակ:
- Ուսուցիչը պիտի լինի էտալոն իր աշակերտների համար.

  աշակերտները սիրում են ընդօրինակել ուսուցիչներին, հետևապես ուսուցիչը պետք ուշադրություն դարձնի իր արտաքին տեսքին, խոսքին ու շարժուձևին, քանի որ ուսուցիչը ոչ միայն սովորեցնում է, այլ նաև ոգեշնչում է նրանց ձգտել ինքնուսուցման և հասնել հաջողության:

  Այսպիսով՝ ուսուցիչը հենց ինքը կարող է սիմվոլ դառնալ իր աշակերտների համար՝ ուղղորդելով նրանց նոր բացահայտումների: Ուսուցչի հաջողության կարևոր գրավական է նաև աշակերտների հետ ընկեր լինելու յուրահատկությունը: Մենք չպետք է մոռանանք, որ մոտիվացված աշակերտը առավել պատրաստված ու պատասխանատու է և զարգացնում է արժեքավոր հմտություններ:

[4] https://connex-education.com/how-to-motivate-your-students

Գլուխ 4. Միջին դպրոցում աշակերտների սովորելու մոտիվները «Պատմություն» առարկայի շրջանակներում:

Հետազոտության նպատակ: Պարզել «Պատմություն» առարկայի սովորելու մոտիվացիաները:

Հետազոտության մեթոդ: Աշակերտների մոտիվացիոն դրդապատճառները հասկանալու համար իրականացրել եմ զրույց-քննարկումներ և պատմողական մեթոդներ:

Ընտրանք: Հետազոտության ընթացքում հարցվել են Սիսիանի հ.4 հիմնական դպրոցի 6, 8-րդ դասարանի աշակերտները:

Աշխատանքը կատարել եմ 01.11.2023-01.12.2023թ.:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ավանդական դասի մեթոդները այլևս արդի և մասնակցային չեն: VI «ա» դասարանում ավանդական դասի ժամանակ դասարանում դասին մասնակցեց 28 աշակերտից 4-ը, վերջիններս դասարանի առավել առաջադեմներն էին, իսկ 10 հոգին դասին պատրաստվեցին հենց տեղում՝ զույգերով աշխատանք կատարելով: Մյուսներն այդպես էլ չմոտիվացվեցին. եզրակացություն՝ ավանդական դասը պասիվ է, ուսուցչակենտրոն, հետևապես չի կարող բավարարել արդի սերնդի պահանջները:

Մեկ այլ ուսումնասիրություն իրականացրել եմ VIII «բ» դասարանում, որտեղ անցկացրել եմ դաս-քննարկումներ և խմբային աշխատանքներ: Աշակերտները առաջին հերթին զերծ էին լարվածությունից, նրանք դարձել էին մրցակցային ու մոտիվացված: Նախ խմբերին ներկայացված պահանջներում նշել էի մի շարք կանոններ, որոնց խախտումը խմբի գնահատականը իջեցնում էր:

Խմբի անդամներ	Մասնակցություն %	Գիտելիք	Վերլուծական միտք	Գեղագիտական ճաշակ	Լեզվական պատշաճ մտածողություն	կարգապահություն

Այս աղյուսակով էլ իրականացրել եմ խմբերի քննարկումը և հասել եմ իմ նախատեսած առնվազն մեկ վերջնարդյունքին:

Այս պարագայում դասապրոցեսին ներգրավվել են բոլոր աշակերտները, մրցակցային մթնոլորտը նպաստել է աշակերտների՝ հավուր պատշաճի ներկայանալուն: Նրանք այժմ կարողանում են դասը ինքնուրույն ուսումնասիրել, հասկանալ, խելամիտ հարցադրումներ կատարել և ինքնարտահայտվել: Այժմ փորձում եմ ձևավորել պատմական մտածողություն և խոսքի մշակույթ՝ կիրառելով մի շարք մեթոդներ: Օրինակ՝ «Ժամանակի մեքենա» մեթոդը, ընտրում եմ 2-4 մասնակից ու հանձնարարում ուսումնասիրել որևէ պատմական իրադարձություն և դերային խաղով ներկայացնել ժամանակաշրջանի ականատեսի աչքերով: Փորձը ցույց է տալիս, որ այս մեթոդով զարգանում է նաև աշակերտի ստեղծագործական մտածողությունը:

Այսպիսով՝ քարացած և ավանդական դասերը դարձել են անհրապույր, հետևապես ուսուցիչները պետք է դառնան նորարար և նոր մոտեցումներ ունենան դասապրոցեսին:

Եզրակացություն

Այսպիսով՝ մոտիվացիան այն գործիքն է, որը օգնում է կյանքի զանազան ասպեկտներում: Մոտիվացված աշակերտն առավել պատրաստակամ ու պատասխանատու է լինում: Որպես ուսուցիչներ՝ մենք հանդիսանում ենք «զբոսավար», մենթոր և ոգեշնչման աղբյուր մեր աշակերտների համար, ուստի կարևոր է առաջնային համարել աշակերտներին ճանաչելը. կիսել նրանց հետաքրքրությունները, ծանոթանալ նրանց նախասիրություններին, կարիքներին թե՛ դասապրոցեսում, թե՛ դպրոցից դուրս: Ուսուցիչ- աշակերտ հարաբերություններում կարևոր է աշակերտակենտրոնությունը, քանի որ, երբ աշակերտը հասկացված է զգում իրեն, դասապրոցեսը նրա համար դառնում է ապահով, և նա սկսում է առավել շատ աշխատել:

Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները շատ կարևոր են ուսումնառության ճիշտ կազմակերպման համար: 21-րդ դարի երեխային այլևս չես զարմացնի պարզ գիտելիքներով: Այժմյան կրթական միջավայրը պիտի լինի առավել ազատականացված:

Ուսուցիչը հենց ինքը կարող է ստիմուլ դառնալ իր աշակերտների համար՝ ուղղորդելով նրանց նոր բացահայտումների: Ուսուցչի հաջողության կարևոր գրավականն է նաև աշակերտների հետ ընկերական հարաբերություններ կառուցելու յուրահատկությունը: Մենք չպետք է մոռանանք, որ մոտիվացված աշակերտը առավել պատրաստված, պատասխանատու և արժեքավոր հմտություններ զարգացնող է:

Քարացած և ավանդական դասերը դարձել են անհրապույր, հետևապես ուսուցիչները պետք է դառնան նորարար և նոր մոտեցումներ ունենան դասապրոցեսին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Зайцева М.В.Мотивация и некоторые пути её повышения. М., ИД «Первое сентября»

2. Malone, T. & Lepper (1987). Making Learning Fun: A Taxonomy of Intrinsic Motivations for Learning. In Snow, R. & Farr, M. J. (Ed), Aptitude, Learning, and Instruction Volume 3: Conative and Affective Process Analyses. Hillsdale, NJ
3. David Rock, SCARF: a brain-based model for collaborating with and influencing others, CEO, Results Coaching Systems International, GPO Box 395, Sydney, NSW Australia 2001 Faculty, CIMBA, http://www.davidrock.net/files/NLJ_SCARFUS.pdf
4. https://connex-education.com/how-to-motivate-your-students